Հ. Հ. ՍԱՐԱՋՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԻՍՄԱՅԻԼԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Իսմայիլականությունը իսլամի շիա ուղղության աղանդներից է, որ VIII դ. առաջացավ խալիֆայության ներսում քաղաքական հակամարտությունների և սոցիալական հակասությունների աճի հետևանքով։ Այդ դարում շիան արդեն բաժանված էր երկու հիմնական հոսանքների։ «Չափավորականները» (զայդիները և այլք) հեռու չգնացին ուղղափառ իսլամից՝ սուննայից[1]։ «Ծայրահեղականների», այդ թվում առաջին հերթին իսմայիլականների ուսմունքները, բավականին հեռանալով իսլամի հիմնական դրույթներից, փաստորեն վերաճեցին կրոնափիլիսոփայական առանձին ուղղության[2]։

Իսմայիլականությունն իր անվանումն ստացել է շիա 6-րդ իմամ Ջաֆար աս-Սադիկի (մահացած՝ 765-ին) ավագ որդու՝ Իսմայիլի անունից։ Միջնադարյան սկզբնաղբյուրներով վկայված մահմեդական ավանդույթի համաձայն, Ջաաֆարը, խախտելով շիայի կարգը, իմամությունը ժառանգելու և ուրեմն «տիեզերական ոգին» մարմնավորելու իրավունքից զրկեց «գինեմոլ» Իսմայիլին և իրեն ժառանգորդ կարգեց կրտսեր որդուն՝ Մուսա ալ-Կազիմիին։ Ավագի ժառանգական իրավունքի խախտմամբ շիայի ներսում սկիզբ առավ Մուսային որպես 7-րդ իմամ ճանաչողների՝ չափավորական ուղղությունը, որի հետևորդները, Ալիից սկսած մինչև 878-ին Մուհամմեդ ալ-Մունթազարի անհայտացումը, 12 իմամների ընդունումով, հետագայում կոչվեցին տասներկուսականներ։

Իմամ Ջաաֆարի կարգադրության ի հակադարձություն էլ, փաստորեն, ծնունդ առավ իսմայիլական գերհզոր աղանդը։ Նրանում համախմբվեցին այն շիաները, որոնք, որպես օրինական ժառանգորդի, հավատարիմ մնացին Իսմայիլին, իսկ նրա վաղաժամ (հորից 5 տա-

րի շուտ, 760-ին) մահից հետո, որպես 7-րդ իմամ ճանաչեցին նրա որդուն՝ Մուհամմեդին։

Իսմայիլականները, սակայն, շուտով երկճեղքվեցին։ Մուհամմեդ Թին Իսմայիլին, որպես հաստատապես վերջին ու որպես մահդի (մեսիա—փրկիչ) երկիր վերադառնալիք իմամ դավանողները կոչվեցին յոթնականներ, իսկ IX դարավերջին ստացան «կարմաթներ» անվանումը։ Ըստ էության նույնպես յոթնական այն իսմայիլականները, որոնք Մուհամմեդ Ին Իսմայիլի հետնորդներին ևս ճանաչեցին որպես իմամների (սակայն Աբբասյանների հալածանքներից խուսափելով «թաքնված իմամների»), հետագայում Մուհամմեդ մարգարեի դուստր և առաջին իմամ Ալիի կին Ֆաթիմայի անունով կոչվեցին ֆաթիմյաններ։ Ավելի ուշ, ֆաթիմյան ալ-Հաքիմ խալիֆի անհայտացումից (1021 թ.) հետո նրան մարդացյալ աստված հայտարարող իսմայիլականներից առաջացավ դրուզական աղանդը։ Իսմայիլականության ներսում նմանօրինակ տարանջատումներ ու նոր աղանդների (օրինակ՝ Աղախանին որպես կենդանի աստվածություն ընդունողների աղանդի) առաջացում արձանագրվեց նաև հետագա դարերում։ Այստեղ նշենք, որ իր ժամանակին Կ. Մարքսը, ֆաթիմյան խալիֆայության ժամանակաշրջանն ու նրա հետ կապված համաշխարհային պատմության հարցերն ուսումնասիրելիս, ընդգծել է իսմայիլական աղանդի տարբեր ճյուղավորումների՝ հաշշաշիների, դրուզների, կարմաթների չափազանց ակտիվ մասնակցությունն իրենց ժամանակի քաղաքական անցուդարձերին[3]։

Հայտնի է, որ շիա բոլոր հոսանքները փոփոխական հաջողություններով համառ ու երկարատև պայքար մղեցին ուղղափառ Իսլամի աստվածապետական օմայան, այնուհետև աբբասյան խալիֆայության դեմ՝ հանուն պետության ղեկավարումը Ալիի տոհմին հանձնելու։ Առավել եռանդուն պայքար ծավալեցին իսմայիլականները, որոնց հաջողվեց մահմեդական աշխարհի տարբեր ծայրամասերում ստեղծել իրենց պետականությունները։

Հասկանալի է, որ հնարավոր չէ մի հոդվածում, թեկուզ բուցիկ, պատկերել իսմայիլական աղանդավորական շարժման ընդհանուր պատմությունը։ Եվ մեր առաջադրանքն այստեղ իսմայիլական գաղափարախոսության շրջանակներում սոցիալական արդարության հարցի քննությունն է, լոկ շեշտելով տվյալ հարցի վերաբերյալ իսմայիլական կոլեկտիվ մտքի գագաթնակետ համարվող և իր նշանակությամբ մահմե-

դական աշխարհից դուրս նկող Իխուան աս-սաֆա (Մաքրության եղբայրներ) հանրադիտակների տեսությունն ու իսմայիլական գաղափարախոսությունը իրականացնող կարմաթների պետության պրակտիկան (IX—XI դդ.)։

IX դ. խալիֆների քաղաքական իշխանության և ֆեոդալական դասի շահագործման դեմ բռնկվեցին իրարահաջորդ՝ ժողովրդական երեք խոշոր ապստամբություններ՝ 816—837 թթ. Ատրպատականում և Արևմտյան Իրանում Բաբեկի, 869—883 թթ. Հարավային Իրաքում զինջիների Ալի Բին Մուհամմեդի և IX—XI դդ. Իրաքում, Բահրեյնում, Սիրիայում և այլուր, կարմաթների՝ Համդան Բին Կարմաթի ու հաջորդների գլխավորությամբ։ Զանգվածային այդ շարժումները, անշուշտ, պատահական չէին։ Դրանք օրինաչափ արդյունքն էին արաբա-մահմեդական պետականությունում արձանագրված սոցիալ-տնտեսական որակական փոփոխությունների, աստվածապետական-բացարձակապետական իշխանության իրավաքաղաքական և գաղափարախոսական հիմքերի խարխլման։ Այդ շարժումներին խիստ նպաստեց աբբասյան խալիֆայությունում ստեղծված «ապակենտրոնացված ֆեոդալիզմը», որը զգալապես խոչընդոտում էր արտադրողական ուժերի զարգացումը և պարարտ հող էր նախապատրաստել քաղաքական իշխանության քայքայմանը։ Ինչպես իրավամբ դիտել է տվել արաբ մարքսիստ պատմաբան-փիլիսոփա Հուսեյն Մրուեն, այդ ամենը հանգեցրեց այն բանին, որ «պետությունը նախ. և առաջ ի վիճակի չէր վերահսկելու օրենքների կենսագործումը և ապա անկարող էր ապահովելու ժողովրդական զանգվածների ամենատարրական իրավունքներն ու պահանջները»[4]։ Դժվար չէ, ուրեմն, այն հետևության հանգել, որ նշված ապստամբություններն ունեին սոցիալ-դասակարգային խոր արմատներ, մանավանդ, որ պատմական փաստ է այն, որ զինված շարժումների ընթացքում գլխավոր շարժիչ ուժերը՝ գյուղացիությունն ու արհեստավորությունը, գույքային հավասարություն էին պահանջում հասարակության բոլոր անդամների համար։

Խնդրո առարկա ժամանակաշրջանում սոցիալ-տնտեսական տեղաշարժերին և ժողովրդական ապստամբություններին զուգընթաց, զարգանում էին նաև ուղղափառ իսլամին ու նրա քաղաքական մարմնավորումը հանդիսացող խալիֆայական պետությանը հակադրվող կրոնափիլիսոփայական տարբեր հոսանքներ, որոնց շարքում առավել երևվելիս «Մաքուր եղբայրների» իսմայիլական գաղտնի կազմակերպությունն էր։

Այն երևույթը, որ միջին դարերում հակաֆեոդալական, տնտեսական և քաղաքական շարժումները սովորաբար հանդես են եկել կրոնաազանդավորական քողի ներքո, իր ցայտուն արտահայտությունն է դտել նաև իսմայիլականության գաղափարախոսության և գործողությունների շրջանակներում։ Խալիֆայությունում արձանագրված զինված ելույթներն ակնարկելով, Ֆ. Էնգելսը նշել է, որ «կրոնական պատյանի ներքո ընթացող այդ բոլոր շարժումներն առաջ. էին եկել տնտեսական պատճառներից»[5], մի այլ կապակցությամբ ավելացնելով՝ «ֆեոդալիզմի նկատմամբ հեղափոխական օպոզիցիան անցել է ամբողջ միջնադարով։ Ժամանակի պայմանների համեմատ այն հանդես է գալիս մերթ իբրև միստիկա, մերթ իբրև բացահայտ հերետիկոսություն, մերթ իբրև զինված ապստամբություն»[6]։

Սկզբնաղբյուրները տարաբախտաբար պատասխան չեն տալիս բազմաթիվ հարցերի. ե՞րբ և ինչպե՞ս են հայտնվել «Մաքուր եղբայրները», ո՞վ է նրանց անվանակոչել այդպես, ինչպե՞ս են ստեղծել իրենց եղբայրությունը, ովքե՞ր են հեղինակել տվյալ ժամանակաշրջանի համար իր ընդգրկումներով ու բազմաղանությամբ աննախադեպ երևույթ հանդիսացող նրանց հանրագիտարանը»։

XI դ. մեզ հասած միակ աղբյուրը՝ Աբու Հայյան աթ-Թաուհիդիի (մահացած՝ 1023-ին) աշխատությունը տեղեկացնում է, որ «եղբայրությունը ստեղծվել է Բասրայում. «կազմվելով բարեկամության, հավատարմության և անարատության հիմքի վրա, այն ստեղծեց մի ուսմունք... հեղինակեց հիսուն թուղթ իմաստասիրության համընդհանուր օրինաչափությունների մասին և գաղտնի պահելով հեղինակների անունները, հանձնեց գրիչներին և պարգևեց մարդկանց»[7]։ Աթ-Թաուհիդին նաև միակ պատմագիրն է, որ հաղորդել է «եղբայրներից» մի քանիսի անունները, ալ-Մակդիսի, ազ-Զանջանի, ալ-Մահրաջանի, ալ-Աուֆի և այլք[8]։

Մերօրյա արաբ իսմայիլական պատմաբան Արեֆ Թամերը «Թղթերի» հեղինակ է համարում Իսմայիլ Բին Ջաաֆար աս-Սադիկի թոռանը՝ իմամ Աբդուլլա Բին Մուհամմեդին[9]։ Կարծիք է հայտնվել, նաև, որ «Թղթերը» հորինել է ինքը՝ Իմամ Ջաաֆարը[10]։ Իր հերթին «Թղթերի» հրատարակիչ Ահմեդ Զաքի փաշան 1928-ին դրանք համարել է կարմաթների ուսմունքի հիմքը և կարծիք հայտնել, որ դրանց իմամ աս-Սադիկին վերագրելը հետապնդել է ժողովրդականացման նպատակ[11]։ Ավելացնենք, որ բոլոր դեպքերում ժամանակակից հետա-

զոտողների ստվար մասը օրգանական կապ է գտնում «եղբայրների» և իսմայիլական վարդապետության միջև[12]։

Հավակնություն չունենք այստեղ ընդգրկել «Մաքուր եղբայրների» կրոնափիլիսոփայական ուսմունքի բոլոր կողմերը։ Այստեղ մեր խնդիրը նրանց սոցիալ-քաղաքական հայացքները և այդ հայացքների շրջագծում սոցիալական արդարության հարցի բացահայտումն է։

«Մաքուր եղբայրների» 51 համապարփակ «Թղթերը» գիտափիլիսոփայական և գաղափարախոսական մի հանրագիտարան են, որոնք, ժամանակակից տերմինով ասած, ունեն գործունեության ծրագրի բնույթ՝ իր տակտիկայով ու ստրատեգիայով։

«Եղբայրության» ստրատեգիան կարելի է ամփոփել այսպես.

Նախ՝ ընդդիմադիր դիրք Աբբասյան խալիֆայության ու նրա գաղափարախոսության հիմքը հանդիսացող շարիաթի նկատմամբ։ Հենվելով իրենց ժամանակի տիեզերածնության (կոսմոգոնիա) պատկերացումների վրա, «Եղբայրները» կանխատեսել են, որ Սատուն (Երևակ) և Յուպիտեր (Լուսնթագ) մոլորակների «միջին զուգակցության» ժամանակ, 240 տարի անց, «կփոխվեն արքաները, տիրապետությունը կփոխանցվի այլ ժողովրդի ու գերդաստանի»[13]։ «Մեծ զուգակցման» ժամանակ, 960 տարին մեկ, երկրագնդի վրա տեղի են ունենում կարևոր վերափոխություններ, «հայտնվում է նոր մարգարե, առաջանում է նոր կրոն, փոխվում են օրենսդրություններն ու շարիաթները»[14]։ «Եղբայրները», նման մտքերը որպես անխուսափելիորեն կատարվող տիեզերական օրինաչափություն «լայն ամբոխի» շրջանում փողհարելով, փաստորեն հիմնահատակ են անում իսլամի այն հիմնաղրույթը, որ Մուհամմեդը վերջին մարգարեն է ու նրա վարդապետությունը՝ երկնառաք վերջին կրոնը։ Դրանով իսկ նրանք բացասում ու հերքում են իսլամական խալիֆայության հավիտենականության վերաբերյալ շարիաթի վրա հենվող գաղափարը։

Երկրորդ՝ կործանվող պետությանը փոխարինելու է գալիս նոր որակի մի տերություն։ Մեկ այլ տեղ, դարձյալ կանխագուշակելով, նրանք պնդում են, որ 330 տարի և 4 ամիս անց «պետականությունն անցնելու է Մաքուր եղբայրներին, որոնք տիրելու են 159 տարի», ըստ որում նոր կարգերին տրվում է «բարի մարդկանց պետություն» մակդիրը։ Անդրադառնալով իրենց պետության գաղափարախոսական հիմքերին, նրանք իրենց եղբայրակիցներին կոչ են անում «իրենց սրտերը քացել բոլոր կրոնների, դավանանքների, ուսմունքների ու գիտություն-

ների առաջ, քանզի մեր դավանանքը պարփակում է բոլոր հավատամնքներն ու գիտությունները»[15]։

«Մաքուր եղբայրները» գոյություն ունեցող կարգերն ու իսլամական շարիաթը այլաբանորեն պատկերացնում են որպես չարի մարմնացում, որից պետք է աղատվել. «Եղբայր իմ, ցույց տուր ճշմարտությունը, բացահայտիր յուրաքանչյուր կրոնի և դավանանքի թերությունները, մի ապավինիր քո վատ հավատամքին, այլ ընտրիր ավելի լավն ու բարին»[16]։ Սա արդեն բացահայտ մարտահրավեր էր պաշտոնական իսլամին։ Ավելացնենք, որ «Եղբայրները» բնության, հրեշտակների ու սատանաների, մարգարեության, դրախտի ու դժոխքի և հարության հարցերը բխեցնելով Մերկուրիից (Փայլածու), տալիս էին այնպիսի այլաբանական բացատրություններ, որոնք լրիվ հակադրվում էին շարիաթին, մերժում հոգևկան աշխարհի գոյությունը տիեզերքից ու երկրագնդից անկախ, ընդհուպ մոտենալով մատերիալիստական ըմբռնմանը։

Վերոհիշյալ ստրատեգիական նպատակներին զուգահեռ «եղբայրությունը» գիտակցորեն և ճշգրտորեն սահմանեց նաև իր գործունեության տակտիկան, ըստ որի քարոզչությունը պետք է տարբաժանվեր տարիքային հատկանիշներին համապատասխան փուլերի և հիսունն անց մարդկանց միայն թույլատրվում էր շնորհել չորրորդ՝ «բարձր աստիճանը», որում նրանք ծանոթանում են «կազմակերպության» լրիվ գաղտնիքներին[18]։

Ինչ վերաբերում է իմամությանը, ապա կրոնապետ իմամը պետք է իր մեջ կենտրոնացնի 46 հատկանիշ, որպեսզի դառնա մարգարեին հավասարազոր կամ նրանից գերհզոր։ Եթե այդ բոլոր արժանիքները համատեղված չգտնվեն մեկ անհատի մեջ, ապա եղբայրակիցները պետք է անարատության ու սրբության հիմամբ միավորվեն ու կազմեն «խմբակ» կամ «եղբայրություն»՝ ի խնդիր կրոնի և աշխարհի բարօրության[19]։

Եթե դրան ավելացնենք այն պնդումը, որ «անհետացած իմամը» «գտնվում է մեր մեջ և ճանաչում է մեզ»[20], ապա կարող ենք եզրակացնել, որ ըստ «Թղթերի» հեղինակների հենց ինքը՝ «եղբայրությունն» է ներկայացնում իմամին, այլ խոսքով «Մաքուր եղբայրներն» իրենք իրենց դիտում էին որպես Աբբասյան խալիֆայության ոչ միայն գաղափարախոսական ախոյան, այլև՝ քաղաքական այլընտրանք։

«Մաքուր եղբայրների» կամ որ նույնն է՝ տվյալ ժամանակաշրջանի իսմայիլական գաղափարախոսության սոցիալ-քաղաքական և բարոյագիտական հայացքների համակարգը հարազատորեն արտացո-

լում էր աբբասյան հասարակության իրական պատկերը։ Արաբական փիլիսոփայական մտքի զարգացման պատմության մեջ, առաջին անգամ լինելով, «Եղբայրների» աշխարհայացքում է, որ վերանում է արհամարհական այն վերաբերմունքը, որ գոյություն ուներ ընդհանրապես ձեռքի աշխատանքի, ուրեմն և նրանով զբաղվող հասարակական խավերի նկատմամբ։ Ավելին, նրանք հավասարության նշան են դնում վերջիններիս ու քաղաքական, գիտական և այլ խավերի, այլ խոսքով ֆիզիկական և մտավոր աշխատանքի միջև։ Նրանք, ընդգծելով աշխատանքը որպես մարդկային գոյության առաջին և գլխավոր նախապայման, միաժամանակ անդրադառնում են աշխատանքի հասարակական բաժանման և նյութական խթանների հարցերին։ Հասարակության առաջադիմության և երջանկության համար «որոշ մարդիկ պետք է զբաղվեն գյուղատնտեսությամբ, արհեստներով, շինարարությամբ, առևտրով, իսկ որոշ մարդիկ՝ քաղաքականությամբ ու գիտությամբ»[21]։ Ինչ վերաբերում է աշխատանքի նյութական խթանների հարցին, ապա նրանք ասում են. «Չափի, կշռի, արժեքի և աշխատավարձի գոյությունը իմաստություն է և ողջախոհություն, ...որպեսզի յուրաքանչյուրն աշխատավարձ ստանա ըստ աշխատանքի (ընդգծումը մերն է—Պ. Ս.)»[22]։ Իհարկե դժվար է ասել, թե «եղբայրների» այս դրույթը մատնանշո՞ւմ էր արդյոք աշխատավարձի վճարումն ըստ աշխատանքային արժեքի, այսինքն՝ բացառո՞ւմ էր մարդու աշխատանքի շահագործումը մարդու կողմից։ Այնուամենայնիվ, «եղբայրների» հայացքները անհամեմատ առաջադեմ բնույթ են կրում իրենց նախորդող կրոնափիլիսոփայական բազմաթիվ ուսմունքներից։

«Մաքուր եղբայրների» հանրագիտարանային հիսունմեկ «Թղթերի»[23] երկու երրորդ մասը վերաբերում է ժամանակի բոլոր գիտություններին և միայն մեկ երրորդը՝ սոցիալ-քաղաքական ու գաղափարական հարցերին։ Գիտելիքների այդ ողջ համակարգն ի սպաս գրվեց դասակարգային տարբեր շերտերի և տարբեր ազգությունների ու դավանանքների ներկայացուցիչների։ «Թղթերում» նշված են այն միջոցները, որոնցով պետք է քարոզել ու տարածել այդ գիտելիքները, ըստ որում անգամ անգրագետ լայն ամբոխի շրջանում նախատեսվում էին առանձին կանխօրոք նշանակված համաժողովներ։ Իսկ դա նշանակում է, որ «եղբայրները» ձգտել են լուսավորել ժողովրդական զանգվածներին թե՛ քաղաքական ու դավանաբանական և թե՛ գիտական գիտելիքներով։ Իսկ դա՝ նույնպես միտում էր անդուլ պայքար մղել տիրապետող պաշտոնական գաղափարախոսության դեմ։

«Մաքուր եղբայրներն» իրենց սոցիալական-փիլիսոփայական հայացքներում, օբյեկտիվորեն, ելակետ են ընդունում դասակարգային տարբերային վերաբերմունքը։ Բնական է, որ միջնադարյան դասակարգային հասարակության պայմաններում՝ հասարակական հարաբերությունների սրման, ժողովրդի ստորին խավերի հարստահարման ու ճնշման, տիրապետող կարգերի հանդեպ ժողովրդական զանգվածների դժգոհության կուտակման, և այլևայլ երևույթներ, «Թղթերում» իրենց թեկուզ այլաբանական արտացոլումն են գտել։

Մենք արդեն նշել ենք, որ «Եղբայրները» ձգտում էին ստեղծել «բարի մարդկանց պետություն»։ Նրանց պատկերացմամբ այն բաղկացած է լինելու չորս դասերից՝ արհեստավորներից (արտադրողական ուժերից), ռահվիրաներից (երկրամասերի ամիրաներից, կառավարիչներից, ոստիկաններից), արքաներից և կամոք աստվածաբաններից (փիլիսոփաներից)[24]։ Սա դասակարգային այն նույն կառուցվածքն էր, որ տիրում էր արաբական խալիֆայությունում, միայն թե ավելացրած վերջին՝ կամոք իմաստասերների դասը։ Ուրեմն «Եղբայրներն» ընդունում են թագավորական կարգը։ Այդ դեպքում «բարի մարդկանց տերությունը» նախ ինչո՞վ է տարբերվում դասակառուցային տեսակետից, և ապա՝ որտե՞ղ է «Եղբայրների» դասակարգային վերաբերմունքը։

Իրավունք չունենք, անշուշտ, «Եղբայրներից» պահանջելու, որ իրենց ժամանակից առաջ ընկնեն, կամ էլ այն, ինչ նրանց ուժերից վեր է։ Տվյալ ժամանակաշրջանի համար խիստ բնականոն է հասարակության դասակարգային այդպիսի կառուցվածքը։ Պատմական կոնկրետ-օբյեկտիվ պայմաններն այդ կառուցվածքից հրաժարվելու և նորը առաջադրելու խնդիր չէին դրել ու չէին կարող դնել «Եղբայրների», անգամ նրանց ավելի առաջավոր-ազատարաբ մտածողների գիտակցության մեջ։ Այնուամենայնիվ, «Եղբայրների» առաջարկած պատկերը թույլ է տալիս մեզ սահմանել նրանց դասակարգային վերաբերմունքը, որը մեր կարծիքով ունի երկու կարևոր կողմ։

Նախ այն, ինչը մենք տեսանք, կամոք աստվածաբանները (իմա՝ փիլիսոփաները) հասարակության աստիճանակարգում թագավորներից բարձր են դասվում։ Դա գաղափարական առավել առաջադիմական միքայլ է, որ արժանի է հատուկ ուշադրության։ Որոշ իմաստով նույնիսկ հանկարծակի ենք գալիս հաստատելու, որ միջնադարյան բացարձակապետ ու բռնակալ թագավորի (իմա՝ խալիֆայի) ձեռքից իշխանությունը խլվում է ու հանձնվում փիլիսոփաներին։

Երկրորդն էլ այն, որ թեպետ արհեստավորների դասը գտնվում է հասարակության ամենաստորին մասում, այնուամենայնիվ «Եղբայրներն» այն բարձր գնահատելով, ասում են. «...Արհեստավորները նման են աշխարհի չորս տարրերին՝ կրակին, օդին, ջրին ու հողին»[25]։ Այլ խոսքով նրանք արհեստավորներին համարում են առաջնային դաս, որը արտադրում է այն ամենը, ինչ անհրաժեշտ է «արժանավայել քաղաքի» (հասարակության) համար։

Վերը շարադրվածից պարզ երևում է, որ «Մաքուր եղբայրների» գաղափարախոսությունը հանդիսանում էր աբբասյան խալիֆայության ճնշված ու շահագործված հասարակական լայն խավերի տրամադրությունների, իղձերի և երազանքների դրսևորումներից մեկը։ Նրանք, սերվելով ժողովրդի ստորին խավերից, պահպանում ու շարունակում էին իրենց դասակարգային պատկանելիությունը, թեպետ «Թղթերը» շարադրելիս նրանք արդեն անկասկած պատկանում էին մտավորական դասին։ Այս ամենից ելնելով կարող ենք պնդել, որ իսմայիլական գաղափարախոսության գագաթնակետը հանդիսացող «Մաքուր եղբայրների» քաղաքական, կրոնական, փիլիսոփայական և իրավական հայացքներն անկասկած նպաստեցին հետագայում առավել առաջադիմական, մատերիալիստական գաղափարախոսության ձևավորմանը, մեծ ազդեցություն թողեցին միջնադարյան արաբական փիլիսոփայական մտքի հետագա զարգացման վրա։ Այս նույն միտքը «Սովետական փիլիսոփայական հանրագիտարանում» փոքր ինչ այլ ձևով է մատուցվում, այնտեղ մենք կարդում ենք. «Մաքուր եղբայրները» միտվելով մութազիլիներին, իսմայիլականներին, և կարմաթներին, ներկայացրեցին հակաֆեոդալական, դեմոկրատական շարժման գաղափարախոսությունը»[26]։

Հարկ ենք համարում նշել նաև, որ իսմայիլական շարժման գաղափարախոսությունը, մի կոնկրետ ժամանակաշրջանի ու միջավայրի արգասիքը չէ, բնավ։ Այն թե՛ գաղափարական, թե՛ կազմակերպչական հարցերում, նաև մեթոդների խնդրում դրսևորում էր երանգային ակընհայտ տարբերություններ՝ ըստ ժամանակի ու աշխարհագրական միջավայրի։ Բայց և այնպես դժվար չէ նրանում միաժամանակ հաստատել համընդհանրական. գծեր։

Սկզբնական շրջանում իսմայիլականների քաղաքական պահանջները չէին տարբերվում շիայի մյուս հոսանքների գլխավոր պահանջից. իշխանությունը հանձնել Ալիի ժառանգներին։ Պայքարն այդ շրջանում

կրում էր բացահայտ բնույթ և նպաստում Աբբասյան խալիֆայության դիրքերի խարխլման։

Սակայն, խալիֆայության ճնշման քաղաքականությունը շիային ստիպեց հետագայում անցնել ընդհատակյա գործունեության։ Հենց այդ ժամանակաշրջանում էլ շիաների միջավայրում ծագեց խոր հնադարից՝ բաբելական կրոնից գնոստիկականության փոխանցված և արևելյան բոլոր աղանդների համար բնորոշ՝ «փրկչի», «աղատարարի», «Քրիստոսի» գաղափարից սեփական մահդիի գաղափարը առաջ քաշելու միտքը։ «Անհետացած իմամի» գալուստը ապահովելու է շիայի լիակատար հաղթանակն ամբողջ աշխարհում. նրա շնորհիվ կգա ոսկե դարը, սոցիալական հավասարության ու արդարության դարը[27]։

Իսմայիլական շարժման մասնակիցների դասակարգային և էթնիկական բազմազանությունը, որն իր արտահայտությունը գտավ շարժման ներսում ժամանակ առ ժամանակ արձանագրվող պայքարում, արտացոլվեց նաև շարժման գաղափարախոսության շրջանակներում տարբեր հոսանքների առկայության մեջ։ Պահպանված նյութերը վկայում են, որ իսմայիլականությունը եղել է առաջին կրոնաքաղաքական կազմակերպությունը, որի շարքերում, առաջնությունը տալով բանականությանը, ընդգրկված էին տարբեր ազգությունների ներկայացուցիչներ՝ անկախ կրոնի ու հավատքի պատկանելիությունից[28]։

Իսմայիլական կազմակերպությունն իրենից ներկայացնում էր գաղտնի մի միություն, որի անդամները բաժանվում էին 7 աստիճանների։ Ցածրաստիճան անդամներին հայտնի չէին կազմակերպության քաղաքական նպատակները։ Իսկ բարձրաստիճան (4-րդ-ից բարձր) անդամների գործունեությունը լրիվ գաղտնի էր պահվում։ Շարքային անդամները ոչինչ չգիտեին իրենց ղեկավարների մասին, ինչը որ ուժեղ ներգործություն էր թողնում նրանց վրա։ Քարոզիչները գործում էին գաղտնի, ճարպկորեն հարմարվում ժամանակի և տեղի պայմաններին, կազմակերպության շարքերը համալրում նորանոր անդամներով։ Շարքային անդամները պարտավոր էին անվերապահորեն կատարել իրենց ղեկավարների հրամանը[29]։

Ինչ վերաբերում է իսմայիլականության սոցիալ-քաղաքական և տնտեսական հայացքներին, հատկապես դրանց գործնական կիրառմանը, ապա հարկադրված ենք տվյալ խնդրում բավարարվել կարմաթների պետության օրինակով, քանի որ վերջինս համարվում է իսմայիլականների գաղափարների, իղձերի և նպատակների համարյա կատարյալ մարմնավորումը։

IX դ. սկզբում Իրաքում, այնուհետև Սիրիայում, Բահրեյնում և այլուր ծավալված կարմաթների ապստամբության անվանումը, ըստ ենթադրությունների, դալիս է նրա առաջնորդ Համդան Կարմաթի ազգանունից։ Լինելով հռչակավոր իսմայիլական դար (քարոզիչ), նա կարողացավ շարժման մեջ ներգրավել գյուղացիության և արհեստավորների լայն զանգվածները, մի բան, որ նպաստեց շարժման սոցիալական մոտիվների, հավասարության և արդարության գաղափարների ուժեղացմանը։ Սկզբնական շրջանում Համդանը, բացի գաղափարաքաղաքական լայն քարոզությունից, իսմայիլականների շրջանում բավական խոշորագումար հանգանակություններ կատարեց և սկսեց անհատույց նյութական օգնություն ընձեռել կարիքավորներին, զենք ու զինամթերք կուտակել և Քուֆայի մոտ միջնաբերդ կառուցել (890 թ.)[30]։

Բաղդադի խալիֆայության և կարմաթների զինված բախումները չէին դադարում։ 894 թ. Համդանի հանձնարարությամբ գաի Աբու Սաիդ ալ-Ջաննաբին մեծ հաջողություն գտավ Բահրեյնի քաղաքային և բեդուինական բնակչության մոտ, որոնց նա քարոզում էր լիակատար եղբայրություն մարդկանց միջև՝ անկախ կրոնական և ազգային պատկանելիությունից, և որոնց անողջիրիմյան երանության փոխարեն խոստանում էր երկրային երջանկություն[31]։ 899 թ. նա հիմք դրեց Բահրեյնի անկախ պետությանը, որը պատմագրության մեջ հայտնի է նաև որպես «Բահրեյնի հանրապետություն»։ «Ստեղծվեց առաջին արաբական հանրապետությունը միջնադարում։ Դա ժամանակակից ըմբռնմամբ՝ աշխարհիկ, ոչ կրոնական մի նոր տիպի պետություն էր, որն ուներ իր գաղափարախոսությունն ու սոցիալ-տնտեսական և քաղաքական ծրագիրը»,—գրում է Հ. Մրուեն[32]։

Ճիշտ է, կարմաթների շարժումն Իրաքում բարձրացրեց կրոնադավանաբանական կարգախոսեր, սակայն Բահրեյնում իշխանությունը գրավելուց հետո պարզվեց, որ դրանք ոչ այլ ինչ էին, եթե ոչ ձևով՝ կրոնական, իսկ բովանդակությամբ՝ սոցիալական լոզունգներ։ Կարմաթական պետության հիմնադիրներն ունեին համապատասխան փիլիսոփայական ուսմունք և ոչ թե կրոնական հավատամք։ Նրանք փաստորեն «աստվածացնում» էին բանականությունը, ասելով, որ «գերագույն բանականությունը» աստվածն է[33]։ Ի դեպ, նրանք վերացրեցին ամեն տեսակի կրոնական ծեսերը, թեպետ և չկաշկանդեցին հավատքի ազատությունը[34]։ Արաբական բազմաթիվ աղբյուրներում և արևելագիտական գրականության մեջ տիրում է այն կարծիքը, որ կարմաթներն անաստված էին, անբարեպաշտ և այլն։ Այդ բանավիճային

հարցին սովետական արևելագետ Ե. Բելյաևը տվել է հետևյալ բացատրությունը. «Կարմատները չեն եղել և չէին կարող լինել աթեիստներ, երբ կրոնը եղել է տիրապետող ձև ֆեոդալական հասարակության գաղափարախոսության մեջ։ Հետևաբար, հանդես գալով ֆեոդալական կարգերի դեմ, նրանք լիովին չհեռացան կրոնական պատկերացումների ոլորտից»[35]։

Բահրեյնի կարմատական պետությունը եղել է հողագործական-արհեստավորական համայնք՝ համընդհանուր ստրուկներով։ Համայնք-պետության գլխին կանգնած էր ավագների (սադաթ) վեցյակ խորհուրդը (արաբերեն՝ ալ Ակդանիյա), որի անդամներն ընտրվում էին Սուլայման բին Աբի Տահերի ընտանիքից կամ մերձավորներից ու կազմակերպության բարձրաստիճան մարդկանցից։ Վեցյակն ուներ վեց տեղակալներ (նստում էին ետին թախտին)։ Որոշումներն ընդունվում էին կոլեգիալ[36]։ Քաղաքական այդ կարգը տիրապետող է եղել, 1052 թ., երբ XI դ. պարսիկ ճանապարհորդ Նասիր-ի Խոսրովն այցելեց ալ-Ահսա մայրաքաղաքը։ Այդ աղբյուրը Իբն Հաուկալից հետո համարվում է երկրորդը, որ հավաստի տեղեկություններ է տալիս Բահրեյնի պետության մասին և, որից մեջբերում են կատարում բոլոր պատմաբաններն ու արևելագետները։

Ալ Ակդանիյի առաջին ձեռնարկումներից են եղել հարկերի վերացումը, ավելի շուտ հարկային նոր սիստեմի մշակումը, որը, ըստ պատմական աղբյուրների, որևէ ծանրություն չէր պատճառում համայնքի անդամներին։

Պետության և քաղաքացիների փոխհարաբերությունների մասին Նասիր-ի Խոսրովը գրել է.—«Բահրեյնում կան 80 հազար աֆրիկյան ստրուկներ, որոնք մշակում են դաշտերն ու այգիները։ Քաղաքացիները տասանորդ չեն վճարում: Եթե մեկնումեկը աղքատանում կամ պարտքի տակ է ընկնում, օժանդակում են այնքան ժամանակ, մինչև բարելավի իր վիճակը։ Պարտքի դեպքում պարտատերը վերցնում է իր հասանելիքը միայն։ Երբ որևէ օտարական արհեստավոր է գալիս, նրան տալիս են այնքան դրամ, որ գնի անհրաժեշտ գործիքներ, իսկ պարտքը վերադարձնում է պետությանը, երբ ցանկանա։ Եթե քաղաքացու տունը կամ աղացը քանդվում է և նա անկարող է այն վերանորոգելու, սուլթանները հրամայում են իրենց ստրուկներին անվճար վերանորոգել տունն ու աղացը։ Սուլթանն ունի աղացներ, որտեղ անվճար աղացվում է քաղաքացիների հացահատիկը։ Իսկ սուլթանը վճարում է ջրաղացպաններին, հոգում աղացի վերանորոգման ծախսերը»[37]։

Վերը նշվածից պետք է եզրակացնել, որ Բահրեյնում եղել է ինչ-որ համայնական կամ հանրային սեկտորի ձև, որը տիրապետող է եղել սոցիալ-տնտեսական հաստատություններում։ Այսինքն՝ երկրում տիրում էր կարգուկանոնը, որի հետևանքով հաստատվել էր սոցիալական հարաբերական հավասարություն։ Հենց դրանով պետք է բացատրել այդ համայնքային պետության օրինակելի ուժը, նրա հարատևումը ավելի քան մեկ դար, թեպետ այն շրջապատված էր ամենաոխերիմ թշնամիներով՝ ի դեմս Աբբասյան խալիֆայության։

Հասարակական հարաբերությունների բնագավառում խոշոր նշանակություն ստացավ տղամարդու և կնոջ հավասարությունը։ Կինը հրաժարվել է չադրայից, որն ըստ շարիաթի հրահանգի պարտադիր է մուսուլման կանանց համար։ Նա տղամարդու կողքին է եղել թե՛ աշխատանքում և թե՛ պատերազմի դաշտում։ Այստեղից հալիս կարմաթների թշնամիների մեղադրանքները սեռական սանձարձակ անբարոյականության վերաբերյալ։ Մինչդեռ առկա են շատ վկայություններ այն մասին, որ ընտանեկան հարցերը լուծվել են բարձր մակարդակով[38]։

IX—XI դարերում կարմաթների շարժումը լայն տարածում գտավ Իրաքում, Իրանում, Սիրիայում, Միջին Ասիայում և Հնդկաստանում։ Արաբական պատմագրության մեջ տիրում է այն կարծիքը, որ կարմաթական պետությունն իր մոլեռանդության և դաժանության հետևանքով է, որ չկարողացավ իրականացնել արդար հասարակության վերաբերյալ իր գաղափարները։ Նման մեղադրանքների համար հիմք են ծառայել 930 թ. կարմաթների հայտնվելը Մեքքայում, Կաաբայի կողոպուտը և «սև քարի» ջարդումն ու տեղափոխումը Բահրեյն։ Միայն երկու տասնամյակ հետո՝ 950 թ. կարմաթները քարը վերադարձրեցին Մեքքա, ենթարկվելով ֆաթիմյան ալ-Մանսուր խալիֆի կարգադրությանը, որի հոգևոր գերակայությունը մինչ այդ ընդունում էին[39]։ Իհարկե քաղաքական նպատակներն էին, որ կարմաթներին թելադրեցին դիմել նման քայլի՝ ցույց տալ, որ Աբբասյան խալիֆայությունն անզոր է պահպանելու մուսուլմանական ամենասուրբ Մեքքան անդամ։

Սակայն Աբբասյան խալիֆայության և Ղազնավիների ֆեոդալական պետության կատաղի հարձակումները, ինչպես նաև կարմաթա-ֆաթիմյան կրոնադավանական և քաղաքական մրցակցությունը թուլացրեցին կարմաթների պետությունը, որը XI դ. կեսերին կորցրեց իր նշանակությունը։ Կարմաթական շարժումը տարաբաժանվեց փոքրիկ աղանդների։

Այսպիսով, կարմաթների պետության կործանումը հարկ է վերագրել ոչ միայն արտաքին թշնամիների հարձակումներին, այլև այն քանին, որ իսմայիլական գաղափարախոսությունն ու պետությունը ծագեցին ու ամրապնդվեցին ֆեոդալական հասարակության ընդերքում, հետևաբար բուն իսկ նրանց զարգացումն էլ այլ ուղի չուներ, բացի ֆեոդալական ուղուց։ Հենց դա է իսմայիլական շարժման ողբերգությունը և պատմական դատապարտվածությունը։

П. А. САРАДЖЯН

ВОПРОС СОЦИАЛЬНОЙ СПРАВЕДЛИВОСТИ В ИДЕОЛОГИИ ИСМАИЛИЗМА

Резюме

Исмаилизм--одна из сект шиитского направления ислама, которая возникла в VIII в. внутри арабского халифата па почве политического противоборства и социального противоречия. Исмаилиты развернули особо яростную борьбу против правоверного ислама омаянского, а затем абасидского теократических халифатов, в результате чего исмаилитам удалось создать в различных частях мусульманского мира свои государства.

В статье в рамках идеологии исмаилизма исследуется вопрос социальной справедливости, при этом подчеркивается, что социальные и религиозно-политические взгляды тайной организации Ихван ас-Сафа («Братья чистоты») (X в.), являются апофеозом коллективной мысли исмаилитов и по своей значимости вышли за пределы мусульманского мира.

1 *Տե՛ս* سامى العياش، الاسماعيليون في المرحلة القرامطية، بيروت، ب ت، ص ٣٨

2 *Տե՛ս* بند لي جوزى، من تاريخ الحركات الفكرية في الاسلام، بيروت، ١٩٨٢، ص ١٣٧

3 Архив Маркса и Энгельса, т. V, с. 129.

4 حسين مروة، النزعات المادية في الفلسفة العربية، ج ٢ بيروت، ١٩٧٩، ص ٣٧

5 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 22, с. 468.

6 *Նույն տեղում, հ. 7, էջ 361։ Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Վ. Ի. Լենին, Կրոնի մասին, Երևան, 1977, էջ 164։*

7 ابوحيان التوحيدى، الامتاع والمؤانسة، ط مصر، ١٩٥٣، ج ٦، ص ٣-٤

8 Նույն տեղում։

9 عارف تامر، حقيقة اخوان الصفاء وخلان الوفاء، بيروت، ١٩٥٧، ص. ١٢

10 Տե՛ս رسائل اخوان الصفاء، بيروت، ١٩٥٧، ج ١، ص ٢٢٥

11 Տե՛ս حنا الفاخورى خليل الجر، تاريخ الفلسفة العربية، بيروت، ١٩٥٧، ج ١، ص ٣٠

12 Տե՛ս رسائل اخوان الصفاء، ط مصر، ١٩٢٨، ج ١، ص ٣٠

13 بندلى جوزى، من تاريخ الحركات الفكرية في الاسلام، ص ٢٢٩، عبدالله النجار، مذهب الدروز والتوحيد، القاهرة، ١٩٦٥، ص ٤٨، سامى العينى، الاسماعيليون فى المرحلة القرمطية، ص ١٠٧ ومابعدها.

الرسالة الجامعة، ج ١، ص ٣٢٤—٣٢٣

14 Նույն տեղում։

15 رسائل اخوان الصفاء، ط بيروت، ١٩٥٧، ج ٤، ص ٤١—٤٢

16 Նույն տեղում, էջ 37—39։

17 Տե՛ս Նույն տեղում, հ. 2, էջ 125։

18 Նույն տեղում։ Ըստ տարիքային հատկանիշների բաժանում են չորս փուլերի. 1(15—30), 2(30—40), 3(40—50), 4(50-ից բարձր)։

19 Նույն տեղում, էջ 125—126։

20 Նույն տեղում, էջ 148։

21 Նույն տեղում, հ. 1, էջ 62—63։

22 Նույն տեղում։

23 «Եղբայրները» նշում են, որ «Քղքերը» թվով 52 են։ «Մաքուր եղբայրների Քղքերը» գրքի հեղինակ Ջաբբուր Աբդ ան-Նուրը ենթադրում է, որ գրիչները չորրորդ հատորում երկու Քղքերը միացրել են։ Տե՛ս جبور عبدالنور، اخوان الصفاء، القاهرة، ١٩٤٥، ص ٥١

24 «Համոզ աստվածաբաններ» դարձվածքը նշանակել է իմաստասերներ, փիլիսոփաներ։ Տե՛ս رسائل اخوان الصفاء، ج ٤، ص ١٧٢

25 Նույն տեղում, էջ 108—109։

26 Философская энциклопедия, т. 2, с. 398.

27 Տե՛ս بندلى جوزى، من تاريخ الحركات...، ص ١٤٣

28 Տե՛ս اميل توما، الحركات الاجتماعية فى الاسلام، بيروت، ١٩٨٠، ص ٨٤

29 Սովետական արևելագետ Պ. Ժուզեի կարծիքով իսմայիլական գաղտնի կազմակերպությունների փորձից օգտվել են մասոնական ու հիսուսյան կազմակերպությունները։ Տե՛ս بندلى جوزى، من تاريخ الحركات الفكرية...، ص ١٣٠

30 Տե՛ս الطبرى، ج ٨، ص ٣٠

31 Տե՛ս بندلى جوزى، من تاريخ الحركات...، ص ١٢٧

32 حسين مروة، النزعات المادية، ج ٢، ص ٢٠ Ինսուլմնասիրողների մեծ մասը Բահրեյնում հիմնված պետությունն անվանում է «սոցիալիստական», «կոմունիստական» «համայնավարական» պետություն։ Տե՛ս بندلى جوزى، من تاريخ الحركات...، ميكايل دى خويه، القرامطة، نشأتهم، دولتهم، وعلاقاتهم بالفاطمية، بيروت، ١٩٧٧، محمود اسماعيل، الحركات السرية فى الاسلام، بيروت، ١٩٨٣

33 حسين مروة، ج ٢، ص ٢١

34 إخبار القرامطة في الاحساء – الشام – العراق – اليمن، دمشق، ١٩٨٠، ص ١٩٧ نقلا عن ناصرخسرو، "سفرنامه"، ص ٢٢٦، ٢٢٨

35 Е. А. Беляев, Мусульманское сектанство, М., 1957, с. 58.

36 ميكال يان دي خويه، القرامطة...، ص ١٣٣–١٣٥

37 Մեջբերումն ըստ արաբերեն թարգմանության, էջ 196 اخبار القرامطة في الاحساء...،

38 Տե՛ս الدكتور محمود اسماعيل، الحركات السرية في الاسلام، بيروت، ١٩٧٣، ص ١٣٢–١٣٧

39 Մրբասյան խալիֆ ալ-Մուտինը (946—974 թթ.) առաջարկեց 50 հազար դինար, ասև քարիս դիմաց, սակայն կարմաթները մերժեցին հանձնել այն։ Տե՛ս اخبار القرامطة في الاحساء...، ص ٥٦